# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ք. Կապան** **28 հունիսի 2019թ.**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99-րդ հոդվածների պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2019 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N364-Ա հրամանի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2019 թվականի մայիսի 14-ի N51-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ 2019 թվականի հունիսի 10-28-ն ընկած ժամանակահատվածում իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն (այսուհետ՝ հսկողություն) հետևյալ 17 բնագավառներում՝

<u>Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում</u>, <u>քաղաքաշինություն</u>, <u>հողօգտագործում</u>, <u>ընդերքօգտագործում,</u> <u>առևտուր և ծառայություններ</u>, <u>պաշտպանություն</u>, <u>արտակարգ իրավիճակներ</u>, <u>առողջապահություն</u>, <u>կրթություն</u>, <u>սոցիալական պաշտպանություն</u>, <u>մշակույթ</u>, <u>ֆիզիկական կուլտուրա և սպորտ</u>, <u>տրանսպորտ և կապ</u>, <u>անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն</u>, <u>բնապահպանություն</u>, <u>ոստիկանություն, քաղաքացիական կացության ակտերի գրանցում:</u>

1. Հիմք ընդունելով վերոնշյալ 17 բնագավառների մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության՝ 2019 թվականի հունիսի 10-27-ն ընկած ժամանակահատվածում կազմված N1/1 և N1/2, N2, N3, N4, N5. N6, N7, N8, N9, N10, N11, N12, N13, N14, N15, N16 N17 արձանագրությունները, իրավական և մասնագիտական հսկողության ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, այդ խախտումների վերացման ուղղությամբ արված առաջարկությունների և ժամկետների վերաբերյալ:

2. Խախտումները նշված ժամկետներում չվերացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները կամ անգործությունը կբողոքարկվեն դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Կապան համայնքի ղեկավարը իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Սույն արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Կապան համայնքի ղեկավարին:

**Հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար, ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ՝**

**Ս. Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքի ղեկավար՝**

**Գ. Փարսյան**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ 2019 թվականի հունիսի 28-ի արձանագրության

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Սույն հավելվածում նշված խախտված դրույթների վերաբերյալ տեղեկատվության հիմքն են հսկողության 17 բնագավառների (տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնապահպանություն, ոստիկանություն, քաղաքացիական կացության ակտերի գրանցում) մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության N1/1, N1/2, N2-N17 արձանագրությունները:

(Հսկողության ժամանակահատվածը՝ 2017 թվականի նոյեմբերի 5-ից՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների օրից մինչև 2019 թվականի հունիսի 27-ը: Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացման բնագավառում ֆինանսական բաղադրիչը ստուգվել է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: Այն բնագավառները, որոնցում խախտումներ չեն արձանագրված, ներքոհիշյալ աղյուսակում չեն նշվում:)

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| **Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում** | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 1.30. Համայնքի ավագանու անդամի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով որևէ մշտական հանձնաժողովի անդամակցությունը և դրա նիստերին մասնակցությունը: | Թերի է պահպանված | Համայնքի ավագանին իր 2017-11-21 N3-Ա որոշմամբ ստեղծել է 6 մշտական հանձնաժողով. 1-ին՝ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի (կազմը՝ 3 հոգի), 2-րդ՝ սոցիալական,առողջապահության, սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հարցերի (3 հոգի), 3-րդ՝ քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, տրանսպորտի, կոմունալ տնտեսության, գյուղատնտեսության, բնության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի (կազմը՝ 6 հոգի), 4-րդ՝ ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի (կազմը՝ 4 հոգի), 5-րդ՝ ենթակառուցվածքների գործունեության հարցերի (կազմը՝ 7 հոգի), 6-րդ՝ համայնքի տնտեսական զարգացման և փոքր ու միջին բիզնեսների աջակցման հարցերի (3 հոգի) մշտական հանձնաժողովներ:<br>2017 թվականի նոյեմբերի 5-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների նիստերի արձանագրությունները բացակայում են, այստեղից կարելի է ենթադրել, որ այդ ժամանակահատվածում հանձնաժողովների նիստեր ընդհանրապես չեն գումարվել: 2018 թվականի դեկտեմբերի 10-ից սկսած այդ արձանագրությունները կան: Բացի այդ՝ ավագանու անդամները միաժամանակ մեկից ավելի մշտական հանձնաժողովների անդամներ են, որն անտրամաբանական է և չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջին, համաձայն որի՝ ավագանու անդամը ավագանու կանոնակարգով սահմանված կարգով պարտավոր է անդամակցել ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցել դրա նիստերին: Օրենքի տեքստում «Որևէ» պահանջը նշանակում է հնարավորից մեկն ու մեկը՝ առանց խտրության: | Առաջարկվում է այսուհետ բացառել նմանատիպ բացթողումները: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 2.12. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմելուց և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանը համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) ներկայացված լինելը: | Թերի է պահպանված | Նախկին Կապան քաղաքային համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման 2010 թվականի փետրվարի 26-ին ՀՀ Կառավարության սահմանած կարգով կազմվել և համաձայնեցվել է ճանապարհային ոստիկանության հետ, սակայն ավագանու հաստատմանը չի ներկայացվել: | Միջոցներ ձեռնարկել ամբողջ բազմաբնակավայր համայնքի համար խնդրի կարգավորման ուղղությամբ: |
| 2.13. Համայնքի ղեկավարի որոշման առկայություն՝ համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ: | Թերի է պահպանված | Նախկին Կապան քաղաքային համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմային (2010 թվականի փետրվարի 26-ին հաստատված) համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով աշխատանքներն իրականացվում են, սակայն բացակայում է համայնքի ղեկավարի որոշումը: | Միջոցներ ձեռնարկել ամբողջ բազմաբնակավայր համայնքի համար խնդրի կարգավորման ուղղությամբ: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 2.24. Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գույքագրման փաստաթղթերում կատարած համապատասխան փոփոխությունների առկայություն: | Թերի է պահպանված | Համայնքի կողմից գույք ստանալուց կամ օտարելուց հետո գույքագրման փաստաթղթերի համապատասխան փոփոխությունները չեն ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը: Խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետը, 77-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի համայնքի ավագանին հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, իսկ սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում:<br>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համայնքի պարտադիր խնդիր է համայնքի գույքի կառավարումը: Նույն օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքի սեփականություն հանդիսացող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում:<br>Կապան խոշորացված համայնքի գույքագրման փաստաթղթերը հաստատվել են ուշացումով՝ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N141-Ա որոշմամբ, այնինչ դրանք պետք է առաջին անգամ հաստատված լինեին արդեն համայնքի կազմավորումից՝ 2017 թվականի նոյեմբերի 5-ից հետո՝ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: | Այսուհետ բացառել նմանատիպ դեպքերը և պահպանել օրենսդրության պահանջները: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 3.04. Օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջեի նախագծի կազմման, համայնքի ավագանու հաստատման, բյուջեի կատարման, դրանում առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաև համայնքի ավագանուն եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվությունների ներկայացման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն: | Թերի է պահպա | Համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման եռամսյա հաղորդումները ներկայացվել են համայնքի ավագանու 15.05.2018թ-ի թիվ 4 հերթական, 25.09.2018թ-ի թիվ 8 արտահերթ և 19.10.2018թ-ի թիվ 9 արտահերթ նիստերի ընթացքում՝ ՀՀ <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի դրույթի խախտմամբ, որի համաձայն, հաղորդումները պետք է ներկայացվեն մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը: | Առաջարկվում է այսուհետ պահպանել <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքով սահմանված ժամկետը |
| 3.08. Օրենքով սահմանված կարգով համայնքի ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին: | Թերի է պահպա | Համայնքի աշխատակազմի կողմից 2018 թվականին օգտագործված բենզինի և ավտոգազի ծախսերի մի մասը հիմնավորվել են ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016թ. «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» N37-Ն հրամանով հաստատված հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերում նշված պահանջագիր-բեռնագրերով (ձև Պ-2): Հաշվի առնելով «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը (1. հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը), առաջարկվում է ծախսերի հիմնավորումն իրականացնել ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016թ. N37-Ն հրամանի հավելվածով սահմանված (կետ 48) մարդատար ավտոմեքենայի, ոչ ընդհանուր օգտագործման ավտոբուսի երթուղային թերթիկներով (ձև Ծհ-6): | Առաջարկվում է այսուհետ բացառել նմանատիպ բացթողումները և ապահովել բոլոր ծախսերի հիմնավորվածությունը |
| Քաղաքաշինություն | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 1.01. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | Թերի է պահպանված | Համայնքը բազմաբնակավայր է<br>Կապան քաղաքն ունի գլխավոր հատակագիծ, համաձայն ՀՀ կառավարության 2006 թվական նոյեմբերի 30-ի N1729-Ն որոշման, իսկ մնացած 31 բնակավայրերը չունեն:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որը վերաբերում է նաև Կապանին: | Ապահովել համայնքում առկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին |
| 1.02. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված գոտևորման նախագծի առկայություն | Թերի է պահպանված | Համայնքը բազմաբնակավայր է<br>Կապան քաղաքն ունի գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ, համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1729-Ն որոշման, իսկ մնացած 31 բնակավայրերը չունեն:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը | Ապահովել համայնքում առկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 1.04. Կառուցապատման նպատակով հողամասերը տրամադրվում են հաստատված ծրագրային փաստաթղթերով սահմանված նպատակային և գործառնական նշանակությանը և միջոցառումների առաջնահերթությանը համապատասխան | Թերի է պահպանված | Ստուգվող ժամանակահատվածում համայնքի կողմից կառուցապատման իրավունքով տրամադրվել են 77 հողհատկացում: Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 42-րդ կետի պահանջի<br><br>Համայնքի ղեկավարի 25.12.2017թ N 156-Ա որոշումով Մ 2 միջպետական ճանապարհի հարևանությամբ գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողի գործառնական նշանակությունը փոխվել է և ստացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական, խախտվել է ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի N 968-Ա և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշման պահանջները: | Առաջարկվում է այսուհետ օրենքով սահմանված կարգով ձեռք բերել լիազոր մարմնի համաձայնությունը և այսուհետ զերծ մնալ [illegible] |
| 4.01. ճարտարապետահատակագծային առաջադրանքը/ները (ՃՀԱ) տրամադրվում են համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի դրույթներին համապատասխան | Թերի է պահպանված | Թվով 16 ՃՀԱ-ում ճիշտ չի նշվել առաջադրանքի գործողության ժամկետը: Խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 31 –րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 31 –րդ կետի պահանջները |
| 6.01. Համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծերը համապատասխանում են ՃՀԱ-ում նշված դրույթներին և ՀՀ օրենսդրությամբ ճարտշին. նախագծերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին | Թերի է պահպանված | Համայնքի կողմից տրված ՃՀԱ N 2 25.01.2018թ, ՃՀԱ N 19 01,03,2018թ և ՃՀԱ N 8 25,02,2019թ մասով մշակված և համաձայնեցված նախագծերում բացակայում է շինարարության տևողության նորմատիվային գրաֆիկները, խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 111-112-րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 111-112-րդ կետի պահանջները |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 6.04. Պահպանվում են շինարարության թույլտվության տրամադրման ժամկետները /10 օր, 15 օր/, ըստ նախատեսվող օբյեկտի ռիսկայնության աստիճանի | Թերի է պահպանված | 1) շին. թույլտվություն ,N 2 22,11,2017թ,N 4 04,12,2017թ,N 7 21,12,2017թ, N 1 20,02,2018թ, N 34 10,09,2018թ,N 37 08,10,2018թ,N 40 18,10,2018թ մասով Խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 100-րդ կետի պահանջները<br>2) թվով 30 շին թույլտվության մասով չկա համայնքի հետ նախագծի համաձայնեցման թվագրումը: Խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 5-ի ձև N 2-3 ձևաթղթի պահանջները<br>3) շին. թույլտվություն ,N 54 25,12,2018թ, մասով խախտվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշման պահանջները 4) շին. թույլտվություն ,N 2 26,02,2018թ, և շին. թույլտվություն ,N 23 23,04,2019թ, մասով խախտվել է ընդհանուր օգտագործման տարածքներում կառուցապատման առանձնահատկությունները<br>(ՃՀԱ-ում նախատեսվել էր թեթև կանստուկցիաներով տաղավարների տեղադրում, սակայն նախագծերը նախագծվել են որպես հիմնական կառույցներ) | 1) Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 100-րդ կետի պահանջները<br><br>2) Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 5-ի ձև N 2-3 ձևաթղթի պահանջները |
| 6.08. ՀՀ օրենսդրությամբ սահմանված 3-օրյա ժամկետում թույլտվության պատճենները ներկայացվում են ՀՀ ՔՆ քաղաքաշինական պետական տեսչություն և ՀՀ ԿԱ հարկային ծառայության համապատասխան տարածքային տեսչություն | Թերի է պահպանված | շին. թույլ N 10,12,04,2018թ շին. թույլ N 46,29,11,2018թ շին. թույլ N 48,30,11,2018թ շին. թույլ N 51,17,12,2018թ<br>մասով Խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի<br>պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 6.09. 3-օրյա ժամկետում շինարարության (քանդման) թույլտվություն տրամադրելու վերաբերյալ հրազենկվում է ՀՀ համապատասխան մարզպետը | Թերի է պահպանված | շին. թույլ N 10,12,04,2018թ շին. թույլ N 46,29,11,2018թ շին. թույլ N 48,30,11,2018թ շին. թույլ N 51,17,12,2018թ մասով խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 7.01. ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրվում է՝ շահագործման ակտի ձևակերպմամբ, կառուցապատողի կողմից ներկայացված դիմումի և դիմումին կից փաստաթղթերի հիման վրա: Դիմումին կցվող փաստաթղթերն են՝ 1) ընդունող հանձնաժողովի կողմից շահագործման ակտը կամ երկկողմանի շահագործման ակտը. 2) երկկողմանի շահագործման ակտի դեպքում՝ տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացությունները. 3) կատարողական փաստաթղթերի ցանկը. 4) շահագործման ակտի ձևակերպման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վճարի | Թերի է պահպանված | ավ. ակտ (շ.թ) N21 06.07.2018թ, ավ. ակտ (շ.թ) N 23 13.07.2018թ, ավ. ակտ (շ.թ) N 12 16.04.2019թ, մասով<br>խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 5-ի ձև 3-1-ի ձևաթղթի հիմքերի 3-րդ կետի պահանջները<br>ավ.ակտ (շ.թ) N 13 16.04.2019թ, ավ. ակտ (շ.թ) N 13 16.04.2019թ, մասով խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 5-ի ձև 3-1-ի ձևաթղթի հիմքերի 1.2.3.-րդ կետերի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 5-ի ձև 3-1 ձևաթղթի 1.2.3-րդ կետերի պահանջները |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 7.02. Պահպանվում են շահագործման ակտի ձևակերպման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետները՝ ըստ օբյեկտի ռիսկայնության աստիճանի (II և III կատեգորիայի համար 3-օր, IV և V կատեգորիայի համար՝ 5-օր) | Թերի է պահպանված | ավ. ակտ (շ.թ) N9 12,03,2018թ, ավ. ակտ (շ.թ) N10 12,03,2018թ,ավ. ակտ (շ.թ) N11 12,03,2018թ, ավ. ակտ (շ.թ) N12 12,03,2018թ, ավ. ակտ (շ.թ) N13 12,03,2018թ, ավ. ակտ (շ.թ) N19 12,06,2018թ, ավ. ակտ (շ.թ) N24 20,09,2018թ ավ. ավ. մասով, խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 169 –րդ կետի պահանջները | Առաջարկվում է ապահովել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 169 –րդ կետի պահանջները |
| 8.01. Համայնքում ինքնակամ շինարարության դեպքերը կասեցված են | Թերի է պահպանված | Ստուգվող ժամանակահատվածում համայնքի տարածքում հայտնաբերվել է 9 ինքնակամ շինության դեպք՝ համաձայն տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի | Միջոցներ ձեռնարկել ինքնակամ շինությունները բացառելու ուղղությամբ: |
| 10.05. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերի մշակում և հաստատում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 10) | Թերի է պահպանված | Առկա է ոչ բոլոր գերեզմանատների համար: | Ապահովել համապատասխան փաստաթղթերի կազմումը: |
| 10.06. Գերեզմանատներում տրամադրվող գերեզմանների չափերի պահպանում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 11, 12) | Թերի է պահպանված | Հաճախ տրամադրվում են առանց սահմանված չափերի պահպանման: | Այսուհետ ապահովել սահմանված չափերի պահպանումը: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 10.07. Գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 15, 16) | Թերի է պահպանված | Ապահովված է գերեզմանատների մաքրությունը, բացակայում են հատակագծերը | Միջոցներ ձեռնարկել համապատասխան հատակագծերը ձեռք բերելու ուղղությամբ: |
| **Առևտուր և ծառայություններ** | | | |
| 08. Բացօթյա առևտուր կարող են իրականացնել միայն ՀՀ օրենսդրությանը համապատասխան թույլտվություն ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը | Թերի է պահպանված | Թույլտվություն է տրվել նաև ֆիզիկական անձանց | Միջոցներ ձեռնարկել թերությունները վերացնելու ուղղությամբ և այսուհետ բացառել նմանատիպ բացթողումները: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 09. Թույլատրվում է միայն ծաղիկների, տնկիների, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիների և սոճիների, պաղպաղակի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների բացօթյա առևտուրը: Բացօթյա առևտուր իրականացնողները պետք է ապահովեն պայմաններ վաճառվող ապրանքների ապրանքային տեսքը, անվտանգությունը և որակն ապահովելու համար: Վաճառարկղերը պետք է դրվեն տակդիրների վրա, արգելվում է վաճառարկղերը դնել անմիջական գետնին, մայթին, սալահատակին | Թերի է պահպանված | Թույլտվություն է տրվել նաև գյուղատնտեսական արտադրանքի իրացման համար | Միջոցներ ձեռնարկել թերությունները վերացնելու ուղղությամբ և այսուհետ բացառել նմանատիպ բացթողումները: |
| Արտակարգ իրավիճակներ | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 1.04. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի առկայություն: | Թերի է պահպանված | Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության և տարահանման միջոցառումները ներառված են տարահանման և ԱՌԿ պլանում | Մշակել, համաձայնեցնել և հաստատել պլանը |
| 1.05. Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն: | Թերի է պահպանված | Տուժած բնակչության համակողմանի ապահովման միջոցառումները ներառված են տարահանման պլանում | Միջոցներ ձեռնարկել թերությունները վերացնելու ուղղությամբ և այնուհետ բացառել բացթողումները: |
| **Առողջապահություն** | | | |
| 2.12. Աղբահավաք խցի ներքին մակերեսներն ունեն մաքրման, լվացման և ախտահանման հնարավորություն ընձեռնող մակերեսներ՝ հարթ են, բարեկարգ, ամբողջական: | Թերի է պահպանված | Լվացման հնարավորությունը բացակայում է, իրականացվում է միայն ախտահանում: | X |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 2.20. Աղբատար փոխադրամիջոցների հետ առկա են.<br>1) փակ թափքեր,<br>2) աղբաջրերը հավաքող համակարգ,<br>3) կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք,<br>4) կոնտեյներները լվանալու համակարգ: | Թերի է պահպանված | Փակ թափքեր չունեցող փոխադրամիջոցների դեպքում աղբի բարձումից հետո թափքը ծածկվում է ցանցով: Աղբաջրերը հավաքող համակարգերը բացակայում են | Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել հարթակների լվացում |
| 2.22. Շենքերի աղբամուղները և աղբահավաք խցերը լվացվում և ախտահանվում են ամիսը 1 անգամ: | Թերի է պահպանված | Իրականացվում են ախտահանման աշխատանքներ, լվացման հնարավորությունը բացակայում է: | X |
| 3.05. Ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրի որակը ջրի մշակման ժամանակ ներմուծված և առաջացած վնասակար քիմիական նյութերի պարունակությամբ (մնացորդային ազատ քլոր և այլն) համապատասխանում է նորմերին: | Թերի է պահպանված | Ապահովվում է միայն ջրամատակարար կազմակերպությունների կողմից սպասարկվող բնակավայրերում | Համայնքը չունի նման հնարավորություն |

Վերոնշյալ բոլոր դրույթների մասով հայտնաբերված խախտումները (թերությունները) վերացնելու նպատակով առաջարկվում է 20 աշխատանքային օրվա ընթացքում միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ:

«3.20. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշման պահանջների պահպանում:» դրույթի կատարումը չի ստուգվել (Արձանագրություն N1/2):

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |

Առողջապահության բնագավառին վերաբերող դրույթների ստուգման հարցաշարը (Արձանագրություն N8) լրացված է Կապան համայնքի միայն Կապան և Սյունիք բնակավայրերի մասով, քանի որ 38 բնակավայր ընդգրկող Կապան խոշորոցված համայնքը դեռևս չի իրականացնում աղբահանություն և սանիտարական մաքրում՝ Կապան համայնքի բոլոր 38 բնակավայրերում, այլ դրանք կատարում է միայն Կապան քաղաքում և Սյունիք գյուղում: Առաջարկվում է միջոցներ ձեռնարկել՝ համայնքի ողջ տարածքում (բոլոր բնակավայրերում) աղբահանության կազմակերպման խնդիրը լուծելու ուղղությամբ:

Սույն հավելվածը կազմված է 2 օրինակից:

**ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար, ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ՝**

**Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքի ղեկավար՝**

**Գ.Փարսյան**